ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
REPUBLIC OF ARMENIA
ARAGATSOTN MARZ
MUNICIPALITY OF TALIN

0501 ք.Թալին Գայի 1
Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ : talinihamaynqapetaran@list.ru

0501 t.Talin
Tel.060-75-77-87
Email:talinihamaynqapetaran@list.ru

N° 56/3937

06 11 2024թ

«Կապիտալ գրուպ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
Հայաստանյան մասնաճյուղի
ՏՆՕՐԵՆ՝ Սվետլանա Կովալենկոին
/հասցե՝ Շիրակի մարզ ք.Արթիկ Ղարիբջանյան փ 39 տուն
Հեռ +37491-50-08-04
Kapital.group.construction@gmail.com
ՀՎՀՀ 05549561

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Թալինի համայնքապետարանի և «Կապիտալ գրուպ» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի օգոստոսի 22-ին կնքված «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-24/107» ծածկագրով, Թալինի համայնքապետարանի աստիճանահարթակիվերանորոգման աշխատանքների ձեռքբերման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր), 1.1 կետի համաձայն՝ կատարողը պարտավորվում սույն պայմանագրով սահմանված կարգով կատարել շինարարական աշխատանքները հավելված 1-ով նախատեսված ծավալաթերթի համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարած աշխատանքը և վարձատրել դրա համար:

Թալինի համայնքապետարանի և «Կապիտալ գրուպ» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-24/124-2» ծածկագրով, Թալինի համայնքապետարանի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր), 1.1 կետի համաձայն՝ կատարողը պարտավորվում սույն պայմանագրով սահմանված կարգով մատակարարել ապրանքները հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վարձատրել դրա համար:

«Կապիտալ գրուպ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ Հայաստանյան մասնաճյուղի 22.10.2024թ գրության համաձայն Ընկերությունը հրաժարվում է կատարել իր պայմանագրային պարտավորությունները ֆինանսական խնդիրների պատճառով

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-24/107 պայմանագրի 8.11 կետի և «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-24/124-2» պայմանագրի 8.9 կետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, չի մատակարարում ապրանքը ժամկետը լրանալուց հետո, կամ հրաժարվում է մատակարարումից

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կապիտալ գրուպ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ **Պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագրերը միաժամանակ** կիրառելով տուգանք համաձայն «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-24/107 Պայմանագրի 6.3կետի (Պայմանագրի 5.1կետով սահմանված գումարի 0.5%-ի չափով) 21000/քսանմեկ հազար / ՀՀ դրամ և «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-24/124-2» Պայմանագրի 6.3կետի (Պայմանագրի 3.1կետով սահմանված գումարի 0.5%-ի չափով) 1638/ մեկ հազար վեց հարյուր երեսունութ/ՀՀ դրամ, այդ մասին *պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները և պայմանագրի 8.11 կետը, այն է՝*

Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

Պայմանագիրը կհամարվի ամբողջությամբ լուծված Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված

դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Այսպիսով «**«Կապիտալ գրուպ» ՍՊԸ**-ին տրվում է 10/տաս օրացուցային օր «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-24/107» պայմանագրին կից տուժանքով սահմանված որակավորման ապահովման 683940/վեց հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր քառասուն/ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման 455960/չորս հարյուր հիսունհինգ հազար ինը հարյուր վաթսուն/ՀՀ դրամ

«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-24/124-2» պայմանագրին կից տուժանքով սահմանված որակավորման ապահովման 49800/քառասունինը հազար ութ հարյուր/ՀՀ դրամ և պայմանագրի ապահովման 33300/երեսուներեք հազար երեք հարյուր/ՀՀ դրամը գումարները Թալինի համայնքապետարանի 900462151096 հաշվին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն «**«Կապիտալ գրուպ» ՍՊԸ**-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որոկավորման և պայմանագրի ապահովումները միկողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարի բանկ նշված գումարները գանձելու նպատակով:

Ընդ որում, եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Թալին համայնքի ղեկավար **Տ.Սափեյան**